ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» նոյեմբերի 2021 թվականի N 13-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-Ի N 14-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհուրդը ***որոշում է***.

1. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի նոյեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի գործունեության ոլորտում հանրությունից ստացվող բողոքների ընդունման և դրանց հետագա ընթացք տալու կարգը սահմանելու մասին» № 14-Լ որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 1-ին կետի 2-րդ ենթակետի և Հավելված N 2-ի վերնագրում «սպառնացող» բառից հետո լրացնել «ինչպես նաև ֆիզիկական անձանց օրինական շահերին վնաս հասցնելու» բառերով.

2) Հավելված N 1-ի 16-րդ կետում «վտանգ սպառնալու» բառերից հետո լրացնել «, ֆիզիկական անձանց օրինական շահերին վնաս հասցնելու վտանգի կամ վնաս հասցնելու» բառերով.

3) Հավելված N 1-ի 17-րդ կետի 1-ին ենթակետում «վտանգի» բառից հետո լրացնել «, ֆիզիկական անձանց օրինական շահերին վնաս հասցնելու» բառերով.

4) Հավելված N 2-ի 2-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«2. Բժշկական օգնության և սպասարկման ոլորտ.

1) Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության սպասարկման շրջանակներում.

ա. արյունը կամ դրա բաղադրամասը վերցնելու կարգի պահանջների խախտումներ,

բ. արյան պարտադիր հետազոտությունների իրականացման կարգի ու մեթոդների խախտումներ,

գ. արյան բաղադրամասերի պատրաստման պահանջների խախտումներ,

դ. արյան կամ դրա բաղադրամասերի պահպանման, տեղափոխման, արտահանման և ներմուծման պահանջների խախտումներ,

ե. դոնորական արյան պատրաստուկների արտադրության և շրջանառության պահանջների խախտումներ,

զ. արյան բաղադրամասերի փոխներարկման իրականացման պահանջների խախտումներ,

է. արյան պաշարների ապահովման և արյան բաղադրամասերի տրամադրման պահանջների խախտումներ:

2) Բնակչության բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում.

ա. լիցենզավորման պարտադիր պայմանների և պահանջների խախտումներ:

3) Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների շրջանակներում.

ա. հղիության արհեստական ընդհատման իրականացումը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումներ,

բ. կամավոր բժշկական ամլացման իրականացումը՝ իրազեկված համաձայնության պահանջների խախտումներ,

գ. կամավոր բժշկական ամլացման իրականացումը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումներ,

դ. հղիության արհեստական ընդհատման և կամավոր բժշկական ամլացման նկատմամբ,

ե. վերարտադրողականության (սեռաբջջի) դոնորության գործընթացի հետ կապված խախտումներ.

4) «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի շրջանակներում.

ա. փոխպատվաստման օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու, մշակելու և փոխպատվաստման իրականացումը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումներ,

բ. դիակից օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու թույլտվության՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումներ:

5) Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման շրջանակներում.

ա. պարտադիր բժշկական խորհրդատվություն և հետազոտում չիրականացնելը»:

5) Հավելված N 2-ի 2-րդ կետից հետո լրացնել 2.1-րդ և 2.2-րդ կետերով հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման շրջանակներում.

ա. Ծխախոտային արտադրատեսակների, դրանց պատկանելիքների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նպատակով օգտագործվող փոխարինիչների), ծխախոտային արտադրատեսակների նմանակների գովազդի, իրացման (վաճառքի) խթանման բոլոր ձևերի պահանջների խախտումներ:

2.2. Գովազդի շրջանակներում.

ա. բուժտեխնիկայի, բուժական մեթոդների, բժշկական օգնության և սպասարկման գովազդի իրականացումը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումներ,

բ. մարդու օրգանների և հյուսվածքների գովազդի իրականացումը,

գ. արյան կամ դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության գովազդի իրականացումը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումներ,

դ. մանկական և վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների, մինչև 6 ամսական մանուկների համար մանկական կաթնախառնուրդ չհանդիսացող ցանկացած սննդամթերքի և հարակից ապրանքների գովազդը»:

6) Հավելված N 2-ի 3-րդ կետի 1-ին ենթակետում «սանիտարահիգիենիկ» բառից հետո լրացնել «և հակահամաճարակային» բառերով:

7) Հավելված N 2-ի 3-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«2) ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի խմելու ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջները չպահպանելը»:

8) Հավելված N 2-ի 3-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«3) լողավազաններին ներկայացվող սանիտարահամաճարակային պահանջները չպահպանելը»:

9) Հավելված N 2-ի 3-րդ կետի 4-րդ ենթակետում «սրահների» բառը փոխարինել «սրահներին ներկայացվող» բառերով:

10) Հավելված N 2-ի 3-րդ կետի 5-րդ ենթակետում «դպրոցական ուսումնական հաստատությունների» բառերը փոխարինել «հանրակրթական ուսումնական հաստատություններին ներկայացվող» բառով:

11) Հավելված N 2-ի 3-րդ կետի 6-րդ ենթակետը ուժը կորցրած ճանաչել:

12) Հավելված N 2-ի 3-րդ կետի 7-րդ ենթակետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«7) Կազմակերպություններում վարակիչ հիվանդության դեպքերի արձանագրումը»:

13) Հավելված N 2-ի 3-րդ կետի 8-րդ ենթակետում «իմունականխարգելման գործընթացի» բառերից հետո լրացնել «կազմակերպման և իրականացման» բառերով:

14) Հավելված N 2-ով հաստատված Ցանկը լրացնել նոր 5-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«5. Աշխատանքային իրավունքի ապահովման ոլորտ.

1) առանց գրավոր աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի աշխատելը.

2) աշխատավարձի վճարման ժամկետները պարբերաբար խախտելը կամ աշխատավարձ չվճարելը.

3) առավելագույն աշխատաժամանակի և արտաժամյա աշխատանքի ներգրավման սահմանափակումները չպահպանելը.

4) առանց օրենքով սահմանված հիմքերի աշխատանքային պայմանագիրը լուծելը.

5) տեղափոխված ամենամյա արձակուրդը աշխատանքային տարին ավարտվելուց հետո 18 ամսվա ընթացքում չտրամադրելը»:

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՂԵԿԱՎԱՐ,
ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ
ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ ՎԱՐՈՂ՝

Recoverable Signature

X

Signed by: ASOYAN ARTUR 4001830647

Ա. ԱՍՈՅԱՆ